ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«06» փետրվար 2020թ. N 471 - Ա

Ընդհանուր բաժին
№ 0816
10 FEB 2020
09.50
Կից Նշում Համաձայն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103007520 առ 31.01.2020թ. փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 9 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրիելյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

Ստաց. 07.02.20 ժ. 16 [illegible]

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

6.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

06.02.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020թ. փետրվարի 06 - ի N 471 – Ա հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ
ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Երկիր | Բացթողման կարգ | Եզրակացության համար և ամսաթիվ | Գրանցման ընթացակարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լևոմիցետին | քլորամֆենիկոլ | դեղահատեր | 500մգ; (10/1x10/) բլիստերում | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Դ | 19079 31.01.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 2 | Օրտոֆեն Թաթֆարմ | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) | դեղահատեր աղելույծ | 25մգ; (30/3x10/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Դ | 19080 31.01.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 3. | Պեո | ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) | դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի | 1000մգ; ապակե սրվակ | Լաբորատորիո Ռեյգ Խոֆրե, Ս.Ա., Ջարամա 111 Պոլիգոնո Ինդուստրիալ, Տոլեդո, 45007 Տոլեդո | Իսպանիա | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | Դ | 19081 31.01.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 4. | Զալաստա | օլանզապին | դեղահատեր | 5մգ; (28/4x7/) բլիստերում, | ԿՌԿԱ Պոլսկա Սպ. զ o.o., ուլ. | Լեհաստան | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, | Սլովենիա | Դ | 19082 31.01.2020 | Ընդհանուր հիմունքներով |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | (56/8x7/) բլիստերում | Ռովնոլեգլա 5, Վարշավա, 02-235 | | Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | | | | (նոր կարգ) |
| 5. | Զալաստա | օլանզապին | դեղահատեր | 10մգ; (28/4x7/) բլիստերում, (56/8x7/) բլիստերում | ԿՌԿԱ Պոլսկա Սպ. զ o.o., ուլ. Ռովնոլեգլա 5, Վարշավա, 02-235 | Լեհաստան | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | Դ | 19083 31.01.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 6. | Յոդ | յոդ | լուծույթ արտաքին կիրառման | 50մգ/մլ; 25մլ ապակե շշիկ | Թաթքիմֆարմ պրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | ԱԴ | 19084 31.01.2020 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |
| 7. | Ցեֆտրիաքսոն | ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) | դեղափոշի ներարկման լուծույթի | 1000մգ; (10) ապակե սրվակներ | ՑՌ Գոսուն Ֆարմա, No. 2 Կաիֆենգ Ռոադ փ. պողոտա, Շանգմեիյին, Ֆուտիան շրջան, Շենջհեն, Գուանգդոնգ | Չինաստան | ՑՌ Գոսուն Ֆարմա, No. 2 Կաիֆենգ Ռոադ փ. պողոտա, Շանգմեիյին, Ֆուտիան շրջան, Շենջհեն, Գուանգդոնգ | Չինաստան | Դ | 19085 31.01.2020 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |
| 8. | Պրոպոֆոլ-Լիպուրո | պրոպոֆոլ | կիթ ն/ե ներարկման | 10մգ/մլ; (5) ամպուլներ 20մլ | Բ.Բրաուն Մելսունգեն ԱԳ, Կարլ- Բրաուն-Շտրասե 1, 34212 Մելսունգեն, Հեսսեն | Գերմանիա | Բ.Բրաուն Մելսունգեն ԱԳ, Կարլ- Բրաուն-Շտրասե 1, 34212 Մելսունգեն | Գերմանիա | Դ | 19086 31.01.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 9. | Պրոպոֆոլ-Լիպուրո | պրոպոֆոլ | կիթ ն/ե ներարկման | 10մգ/մլ; (10) ապակե սրվակներ 50մլ | Բ.Բրաուն Մելսունգեն ԱԳ, Կարլ- Բրաուն-Շտրասե 1, 34212 Մելսունգեն, Հեսսեն | Գերմանիա | Բ.Բրաուն Մելսունգեն ԱԳ, Կարլ- Բրաուն-Շտրասե 1, 34212 Մելսունգեն | Գերմանիա | Դ | 19087 31.01.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |